Հայաստան

Հոկտեմբեր, 2020 թ.

ՄԱԿ ՓԳՀ-ն **70,000 ԱՄՆ դոլարի չափով մեկանգամյա դրամական օգնություն է հատկացրել 247 տեղահանված սիրիացի ընտանիքների՝** աջակցելու ՔՈՎԻԴ-19-ի տնտեսական հետեւանքների մեղմման ուղղությամբ Կառավարության ջանքերին՝ **ՄԱԿ-ի բազմագործընկեր նպատակային հիմնադրամի** միջոցներով:

Երևանի քաղաքապետարանը սոցիալական պաշտպանության ոլորտում մի շարք նոր բարեփոխումներ է սկսել՝ **սոցիալական աջակցության և ինտեգրման պիլոտային ծրագրերին հատկացնելով 65,000 ԱՄՆ դոլար,** որն ուղղված է 2020 թ. ընթացքում գրանցված 150 խոցելի փախստականներին, ապաստան հայցողներին, տեղահանված այլ բնակչությանը:

Ասպարեզ են գալիս նոր գործընկերներ և նվիրատուներ, որոնք առավել անապահով փախստականներին օգնում են ներգրավվել առցանց կրթությանը՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում նվիրաբերելով թվային սարքեր, ինչը լիովին համահունչ է **«Փախստականների մասին գլոբալ համաձայնագրին»** և **«Cities#WithRefugees» քարոզարշավի** ոգուն:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Փախստականներ, ապաստան հայցողներ (ըստ երկրի) և քաղաքացիություն չունեցող անձինք

- Սիրիա՝ **14,744***
- Ադրբեջան՝ **1,856**
- Իրաք՝ **1,099**
- Իրան՝ **158**
- Ուկրաինա՝ **119**

Քաղաքացիություն չունեցող՝ **976**

Ընդհանուր՝ **19,125**

* Փախստականներ, ապաստան հայցողներ և փախստականի նման իրավիճակում հայտնված անձինք (աղբյուրը. *Կառավարություն, հունիսի 1, 2020):*

ՄԱԿ ՓԳՀ-Ի ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ

Անձնակազմ

14 տեղացի աշխատակից

2 միջազգային աշխատակից

4 օժանդակ աշխատակից

Գրասենյակներ՝

1 գրասենյակ՝ մայրաքաղաք Երևանում

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2020 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ)

3.7 միլիոն ԱՄՆ դոլար



Ֆինանսավորման տոկոսային մասը (51%) և ընդհանուր բյուջեն (1,867,659 ԱՄՆ դոլար) ինդիկատիվ են: Արդյունքում, ֆինանսավորման ինդիկատիվ ճեղքը 1,791,702 ԱՄՆ դոլար է, որը պահանջվող ֆինանսական միջոցների 49%-ն է:

Իրաքցի դպրոցական աղջիկը սկսում է առցանց դասերը մասնավոր նվիրատուից ստացած թվային սարքի շնորհիվ: Լուսանկարը՝ ՄԱԿ ՓԳՀ-ի:

Աշխատանք գործընկերների հետ

ՄԱԿ-ի հայաստանյան թիմում գործունեություն ծավալող ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը համագործակցում է պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ Միգրացիոն ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Հանրային պաշտպանի գրասենյակի, համապատասխան գերատեսչությունների, դատաիրավական մարմինների, Ազգային Ժողովի, Ոստիկանության, համայնքների, ինչպես նաև Սփյուռքում գործող, ֆինանսական և հավատահեն կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գիտակրթական շրջանակների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն անդամակցում է մի շարք միջգերատեսչական համակարգման հարթակների և մեխանիզմների: ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ համատեղ ջանքերով այն շարունակում է խթանել Կայուն զարգացման նպատակների ազգայնացումը և Օրակարգ 2030-ը Հայաստանում:

Ծրագրի գործընկերներ՝

Հայկական կարմիր խաչի ընկերություն

«Առաքելություն Հայաստան» ՀԿ

ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

Հայ օգնության ֆոնդի՝ Երեխաների աջակցության կենտրոն

Հիմնական գործունեություն

- **Մտահոգության առարկա հանդիսացող անձանց վրա ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված արտակարգ իրավիճակի ազդեցության մեղմում.** ՄԱԿ ՓԳՀ-ն աշխատում է իր գործընկերների, այդ թվում՝ համապատասխան գերատեսչությունների, Երևանի քաղաքապետարանի և տեղական կառավարման մարմինների հետ՝ ապահովելու տեղահանված անձանց պատշաճ ընդգրկումը սոցիալական, տնտեսական, առողջապահական և կրթական ազգային մեխանիզմներում և զարգացման ծրագրերում:
- **Պաշտպանական առումով զգայուն մուտքի համակարգեր.** ՄԱԿ ՓԳՀ-ն Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ համատեղ կանոնավոր վերահսկողություն է իրականացնում սահմանային անցակետերում՝ ապահովելու ապաստան հայցողների մուտքը տարածք և Ազգային ապաստանի ընթացակարգը, տեխնիկական աջակցության միջոցով տրամադրում կարողությունների զարգացման դասընթացներ՝ ապաստանի եւ միգրացիայի ոլորտում, ինչպես նաև աջակցում փախստականների իրավունքների վերաբերյալ դասընթացների ինստիտուցիոնալացմանը՝ նախատեսված սահմանային անցակետերի աշխատակիցների համար:

- **Ընդունելու պայմաններ.** ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկերների հետ համագործակցաբար աջակցում է Կառավարությանը՝ բարելավելու ընդունման պայմանները և բավարարելու մտահոգության առարկա հանդիսացող առավել խոցելի անձանց հիմնական կարիքները, մշտադիտարկում է ապաստան հայցողների և փախստականների ընդունման կենտրոնները և անհատական իրավաբանական, հոգեբանական, բժշկական և սոցիալական աջակցություն ցուցաբերում հատուկ կարիքներ ունեցող անձանց:

- **Ապաստանի ընթացակարգերի որակ.** ՄԱԿ ՓԳՀ-ն «Առաքելություն Հայաստանի ՀԿ» հետ համագործակցությամբ ապաստանի տրամադրման վարչական և դատաիրավական ընթացակարգերի մոնիտորինգ է իրականացնում, աջակցում Կառավարությանը՝ բարելավելու ապաստանի ընթացակարգերի որակը և արդյունավետությունը, տրամադրում իրավաբանական խորհրդատվություն և ռազմավարական նշանակության դեպքերում՝ ներկայացվածություն և միջամտություն: Ի լրումն, ՄԱԿ ՓԳՀ վերապատրաստման դասընթացներ է իրականացնում Միգրացիոն ծառայության աշխատակիցների, դատավորների և իրավաբանների համար, աջակցում դատաիրավական համակարգի կատարելագործմանը՝ ապաստանի ոլորտում դատավորների մասնագիտացման միջոցով:

- **Ապաքաղաքացիություն.** ՄԱԿ ՓԳՀ-ն, #IBELONG քարոզարշավի շրջանակում, ապաքաղաքացիության վերաբերյալ օրենսդրության և գործելակերպերի բարելավմանն ուղղված շահերի պաշտպանության գործողություններ է նախաձեռնում և խթանում քաղաքացիություն չունեցող բնակչության մասին տվյալների համակարգված հավաքագրումը: ՄԱԿ ՓԳՀ-ը նաև աջակցում է Կառավարությանը՝ մշակելու ապաքաղաքացիության որոշման արդարացի, արդյունավետ և գործուն ընթացակարգեր, նպաստում քաղաքացիություն չունեցող անձանց համար առավել համընդհանուր և պարզեցված փաստաթղթային ընթացակարգերի մշակմանն ու նրանց հպատակագրման գործընթացի դյուրացմանը: Ի հավելումն, ՄԱԿ ՓԳՀ-ն մեծապես աջակցում է քաղաքացիություն չունեցող անձանց համար 1954 թ. Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերի ներդրմանը, որը համահունչ է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության չափորոշիչներին:

- **Շահերի պաշտպանություն.** ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնել է պետական մարմինների շրջանում իրականացվող շահերի պաշտպանության գործողությունները՝ ազգային ծրագրերում, մասնավորապես՝ առողջապահական, կրթական, իրավական կարգավիճակին ու կենսապահովմանն առնչվող ծրագրերին փախստականների արդյունավետ ինտեգրմանը վերաբերող երկարաժամկետ լուծումների մշակման նպատակով: ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում այս ոլորտն ավելի էր կարևորվել: ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է Կառավարությանն ապաստանի և միգրացիայի վերաբերյալ օրենսդրության ու գործելակերպերի բարելավման ջանքերին՝ դրանք միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով:

- **Ինտեգրում և ինքնաբավություն.** Իր պետական գործընկերներին աջակցելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն նպատակաուղղված աջակցություն է տրամադրում մտահոգության առարկա հանդիսացող անձանց՝ Հայաստանում նրանց ինտեգրմանն օգնելու նպատակով: Հոգեբանական, սոցիալական, իրավաբանական և բժշկական աջակցությանը զուգընթաց

փախստականներն օգտվում են ՄԱԿ ՓԳՀ-ի կազմակերպած մասնագիտական, լեզվի և բիզնես դասընթացների, եկամտի ստեղծման գործիքների և կենսապահովման նախագծերի հնարավորություններից, որոնք ուղղված են նրանց ինքնաբավության մեծացմանն ու նոր միջավայրում կյանքի վերադասավորմանը:

" **Համայնքների համախմբում և կանանց հզորացում.** Փախստականների և երիտասարդական կայացած կոալիցիաների միջոցով ՄԱԿ ՓԳՀ-ն Հայաստանում նպաստում է կանանց և երիտասարդների հզորացմանը, երեխաների պատշաճ կրթությանը, ինչպես նաև ազգային գործընթացներին և համայնքային նախաձեռնություններին մտահոգության առարկա հանդիսացող անձանց արդյունավետ մասնակցությանը՝ ապահովելու նրանց սահուն ինտեգրումը հյուրընկալող համայնքներին:

Արտաքին / Դոնորների հետ հարաբերություններ

Հատուկ շնորհակալություն 2020 թ. հիմնական դոնոր երկրներին

Ամերիկայի Միացյալ Նահանգներ | Կանադա | Սլովակիա | Շվեդիա | Նորվեգիա | Նիդեռլանդներ | Դանիա | Միացյալ Թագավորություն | Գերմանիա | Շվեյցարիա | Մասնավոր դոնորներ

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

Անահիտ Հայրապետյան, արտաքին կապերի համակարգող

հեռախոս՝ +374 91 416 127 (բջջային) ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Պետրոս Ադամյանի փողոց, շենք 14, Երևան 0010, Հայաստան, armye@unhcr.org,

UNHCR Armenia I UNHCR Armenia Facebook I UNHCR Armenia YouTube I UNHCR Armenia Instagram I Refugee Info Armenia Telegram I HELP Armenia website